

**Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Նռնածորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Անգլերեն լեզու (5,5 դասաժամ), Ռուսաց լեզու (11 դասաժամ), Պատմություն, Հասարակագիտություն (9 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմություն (2 դասաժամ), երգ-երաժշտություն (0,5 դասաժամ), կերպարվեստ (0,5 դասաժամ), տեխնոլոգիա (1 դասաժամ), դասվար 1-ին (20 դասաժամ), դասվար 2-րդ (17 դասաժամ), դասվար 4-րդ (11,25 դասաժամ), քիմիա (3,5 դասաժամ), ֆիզիկա (3,75 դասաժամ), ինֆորմատիկա (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև գինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են –2022թ.սեպտեմբերի 27-ից մինչև -հոկտեմբերի 10--ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հոկտեմբերի 13--ին՝ ժամը 13:00-ին**, Նռնածորի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Նռնածոր, 3-րդ փողոց, շենք 2: Տեղեկությունների համար զանգահարել 094105818 հեռախոսահամարով: